2022, ՄԱՅԻՍ Ա, ԹԻՎ 9 (605)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հաղթանակի եւ խաղաղության տոնի, Շուշիի ազատագրության եւ Արցախի դաշտպանության բանակի հիմնադրման օրերի առիթով

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում մեր սիրեցյալ ժողովրդին՝ Հաղթանակի ու խաղաղության տոնի, Շուշիի ազատագրության եւ Պաշտպանության բանակի հիմնադրման օրերի առիթով, ինչպես նաեւ մեր խոնարհումը՝ Հայրենական պատերազմի վետերաններին ու Արցախյան հերոսամարտերի քաջարի զինվորներին:

Պանծալի այս տոները տակավին բեկված սրտերով եւ վշտացած հոգիներով ենք դիմավորում, քանի որ դեռ չեն հաղթահարվել Արցախի դեմ սանձազերծված պատերազմի աղետալի հետեւանքները, չեն վերադարձել գերությունից մեր զավակները, տեղեկություն չունենք անհայտ կորածների վերաբերյալ, իսկ հազարավոր ընտանիքներ մնացել են առանց զավակների կամ ծնողների: Մեր աղոթքն ու խոնարհումն ենք բերում զոհված հայրենյաց պաշտպանների անմահ հիշատակին:

Միրելինե՛ր, ազգիս դարավոր պատմությունը՝ դժվարություններն ու փորձությունները հաղթահարելու, հաղթանակներ կերտելու բազում վկայություններով, մեզ պատգամ է մատուցում նույն ոգով դիմակայելու մեր ժողովրդի եւ հայրենիքի դեմ ծառացած ներքին ու արտաքին մարտահրավերներին: Ազատ ու անկախ ապրելու իրավունքի պաշտպանության համար մղված պայքարները, որոնց նշանավորումն է այսօր, խորհրդանիշն են համազգային համախմբվածության ու միաբանության, որոնք առավել քան երբեք անհրաժեշտ են բարդագույն այս իրավիճակում, որպեսզի միասնաբար դիմագրավենք հառնած հիմնախնդիրներին եւ կերտենք վաղվա նոր օրը, լուսավոր ապագան եւ մեր նոր հաղթանակները:

Մեր աղոթքն է, որ խաղաղություն լինի աշխարհում ու մարդկության կյանքում, եւ հարուցյալ մեր Տերն Իր ամենազոր Աջի հովանու ներքո շինության ու ապահովության մեջ պահի մեր Հայրենիքը եւ զորացնի համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդին արիությամբ, հույսով ու հավատով, այժմ եւ միշտ. ամեն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտներին

28 ապրիլի

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի 8-րդ եւ 10-րդ դասարանների հինգ աշակերտների, որոնք Հայ Եկեղեցու պատմություն առարկայից հանրապետական օլիմպիադայում զբաղեցրել են մրցանակային տեղեր: Աշակերտներին ուղեկցում էին դպրոցի տնօրեն տիկին Սուսաննա Վարդանյանը եւ հոգեւոր տեսուչ Արսեն քհն. Միրզոյանը:

Տեր հայրը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, իր երախտագիտությունը հայտնեց կրթական հաստատության հանդեպ ցուցաբերվող ուշադրության եւ հայրական խնամքի համար:

Իր հայրական օրհնությունը փոխանցելով աշակերտներին՝ Հայոց Հայրապետն ընդգծեց, որ սերտել Հայ Եկեղեցու պատմությունը նշանակում է նաեւ կրթվել աստվածասիրության եւ հայրենասիրության ոգով:

Նորին Սրբությունը հորդորեց մրցանակակիր աշակերտներին նոր ուժով ու եռանդով սովորել ու շարունակել գիտելիքներ ամբարել, որպեսզի կարողանան իրենց օգտակարությունը բերել ազգին՝ դառնալով հայրենիքի արժանավոր զավակներ:

Հայոց Հովվապետը նաեւ իր գնահատանքը բերեց դպրոցի տնօրենին, հոգեւոր տեսչին եւ մանկավարժներին՝ կրթադաստիարակչական գործում իրենց նվիրական առաքելությունն արժանիորեն իրականացնելու համար:

Միջազգային համաժողովի մասնակից փաստաբաններին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնությամբ գումարված «Փաստաբանությունն ինտեգրացիոն գործընթացների համատեքստում. հեռանկարներ եւ մարտահրավերներ» խորագրով միջազգային համաժողովի մասնակից փաստաբաններին՝ գլխավորությամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի:

Հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ պարոն Բաբայանը տեղեկացրեց, որ Մայր Աթոռ են ժամանել Հայաստանի, Ռուսաստանի, Վրաստանի եւ Ֆրանսիայի փաստաբանների պալատների ներկայացուցիչներ, որոնք նպատակ ունեն ծանոթանալու հասարակական կյանքում Հայ Եկեղեցու առաքելությանը եւ իրավական ոլորտում ունեցած ավանդին:

Հանդիպմանը Նորին Սրբությունը, անդրադարձ կատարելով հայ ժողովրդի կյանքում Եկեղեցու առանցքային դերակատարությանը, ընդգծեց, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին դարեր շարունակ եղել է ազգային ու հոգեւոր արժեքների կրողն ու հայի ինքնության կերտողը՝ պետականության բացակայության պայմաններում ստանձնելով հայորդիների իրավունքների եւ քրիստոնեական հավատքի պաշտպանությունը:

Անդրադառնալով գիտաժողովի կարեւորությանը հայ ժողովրդի համար հատկապես այս դժվարին ժամանակներում՝ Հայոց Հայրապետը հույս հայտնեց, որ բարեկամ երկրների փաստաբանները, հաղորդ լինելով Հայաստանի ու Արցախի առջեւ ծառացած մարտահրավերներին, միջազգային հարթակներում կպաշտպանեն հայ ժողովրդի արդար իրավունքները:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ արցախյան 44-օրյա պատերազմին եւ դրա հետեւանքներին, գերիների վերադարձման խնդրին, Ադրբեջանի կողմից տարվող հայատյաց քաղաքականությանը, որն ուղղված է ոչ միայն արցախահայության, այլեւ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված համամարդկային նշանակություն ունեցող կրոնական, հոգեւոր-մշակութային կոթողների դեմ:

Վեհափառ Հայրապետը վստահեցրեց, որ հայ ժողովուրդը քրիստոնեական հավատքի շնորհիվ եւ բարեկամ ու հավատակից ժողովուրդների զորակցությամբ ուժ կգտնի հաղթահարելու առկա դժվարությունները: ➥ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

↩ էջ 1

30 ապրիլի

Արցախի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի հետ:

Հայոց Հայրապետը, ի դեմս նախագահի, իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Արցախի ժողովրդին՝ վստահություն հայտնելով, որ Հայաստանի եւ Արցախի համար այս ծանր ու պատասխանատու ժամանակահատվածում առկա բոլոր դժվարությունները կդիմագրավվեն համազգային միասնականությամբ ու մեր ժողովրդին հատուկ արիության եւ տոկունության ոգով:

Արցախի նախագահն իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Արցախին մշտապես սատար կանգնելու համար, ընդգծեց, որ հերթական անգամ հայ ժողովուրդը՝ մասնավորապես արցախահայությունը, ճակատագրական ժամանակներ է ապրում, եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու հոգեւոր դասի աղոթքները շատ կարեւոր են առկա փորձությունները հաղթահարելու համար:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց արցախահայության առջեւ ծառացած մարտահրավերներին, 44-օրյա պատերազմի հետեւանքների հաղթահարմանն ուղղված քայլերին եւ անվտանգության խնդիրներին: Մտահոգություն արտահայտվեց Ադրբեջանի կողմից շարունակվող սադրիչ գործողությունների եւ հայատյաց քաղաքականության կապակցությամբ: Նորին Սրբությունն ու ԱՀ նախագահը կարեւորեցին բարեկամ երկրների եւ միջազգային հանրության զորակցությունը Արցախի ժողովրդի ազատ ու անկախ ապրելու իրավունքի պաշտպանության գործում՝ անհրաժեշտ նկատելով նաեւ աշխարհասփյուռ հայության հետեւողական աջակցությունը՝ ի նպաստ Արցախի զորացման եւ ապահով ու անվտանգ կյանքի կերտման:

Զրույցի ընթացքում մասնավոր անդրադարձ կատարվեց Արցախի թեմի գործունեությանը, Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային, պատմական ժառանգության պահպանության խնդիրներին:

4 մայիսի

Ֆրանսիայի Սենատի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Սենատի Ֆրանսիա–Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Ժիլբեր-Լյուկ Դըվինազի գլխավորած պատվիրակությանը:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերին, իր գնահատանքը բերեց խորհրդարանական պատվիրակությանը՝ հայ-ֆրանսիական կապերի առավել զարգացման եւ ամրապնդման գործում ներդրած ջանքերի համար: Հայոց Հովվապետն իր երախտագիտությունը հայտնեց Ֆրանսիայի Սենատին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման, ինչպես նաեւ Արցախի անկախության մասին բանաձեւի ընդունման, արցախահայության արդար



իրավունքների պաշտպանությանն ու գերիների վերադարձման խնդրին աջակցելու համար:

Վեհափառ Հայրապետը մտահոգությամբ անդրադարձավ նաեւ Հայաստանի եւ Արցախի նկատմամբ Ադրբեջանի կողմից շարունակվող ոտնձգություններին, վերջինիս վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության ոչնչացման եւ յուրացման դեպքերին՝ կարեւոր նկատելով միջազգային հանրության կողմից հետեւողական ջանքերի գործադրումը՝ Ադրբեջանի որդեգրած նմանօրինակ քաղաքականությունը կանխելու հարցում:

Իր հերթին Ֆրանսիա–Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Ժիլբեր-Լյուկ Դըվինազը նշեց, որ Ֆրանսիան մեծ կարեւորություն է տալիս Հայաստան–Ֆրանսիա կապերի առավել սերտացմանն ու խորացմանը: Պարոն Դըվինազն իր մտահոգությունն արտահայտեց տարածաշրջանում տիրող իրավիճակի վերաբերյալ՝ հաստատելով, որ Ֆրանսիան եւս միջոցներ է ձեռնարկում տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատման համար:

Հանդիպմանն անդրադարձան նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններին եւ գործակցությանը քույր Եկեղեցիների հետ:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Այց «Հաղթանակ» զբոսայգի

Մայիսի 9-ին՝ Հաղթանակի ու խաղաղության տոնի առիթով, Մայր Աթոռի Սուրբ Էջմիածնի միաբաններն ու ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գնդերեցներն այցելեցին «Հաղթանակ» զբոսայգու հուշահամալիր, որտեղ Անհայտ զինվորի հուշարձանին ծաղիկներ զետեղելուց հետո իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախյան հերոսամարտերում զոհվածների անմար հիշատակին: Հոգեւորականները, Մայր Աթոռի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանի հանդիսապետությամբ, աղոթք բարձրացրին առ Աստված նրանց հոգիների հանգստության համար:

Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» վեպը

Սկիզբը՝ թիվ 7–8

Համաստեղը ժողովրդական հերոս Մարտիկի կերպարը նմանեցումների է մղել: Ըստ Գ. Շահինյանի՝ Մարտիկը մարմնավորում է «Աղբիւր Սերոբէն մինչեւ Գէորգ Չաւուշ եւ Անդրանիկ» (*Գ. Շահինեան, նշվ. գիրքը, էջ 161*): Գրեթե նույնն է կրկնում Գ. Սեւանը. Մարտիկը «....էպոսի Սասնա Դավթի տարբերակն է, որ հեղինակի մտքի ու երեւակայության մեջ ունի եւ ունեցել է նաեւ իր բազմաթիվ բնօրինակները, որոնք եղել են եւ կոչվել Անդրանիկ, Աղբյուր Սերոբ, Գեւորգ Չավուշ» (*Գ. Սեւան, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր. 1946–1985, Ե., ԳԱ հրատ, 1997, էջ 184*): Ս. Դանիելյանը նախ սեւեռվում է Անդրանիկի կերպարին, այնուհետեւ ընդարձակում ծանոթ անունների շրջանակը. «.... այդպիսին էր Զորավար Անդրանիկը, որի նախատիպ մեկ տարբերակը Մարտիկն էր» (*Ս. Դանիելյան, «Ամերիկահայ վիպագիրներ», «Հայաստան», 1990, էջ 19*): Այնուհետեւ, ըստ նրա, կերպարը հարստացել է «Գեւորգ Չավուշի, Անդրանիկի, մյուս ֆիդայի հերոսների իրական ներկապնակով» (*նույն տեղը, էջ 20*), «Հեղինակն ինքն էլ բացառիկ կարեւորություն է հաղորդում կերպարին՝ շեշտելով, որ նրա մեջ խտանում են ազատագրական պայքարի մի շարք առաջնորդներ, որոնց թվում եւ Անդրանիկը, որը հայտնի էր «Սպիտակ ձիավորը» պատվանունով» (*նույն տեղը, էջ 25*): Հաջորդում են կերպարների ընդհանրության համար զուգահեռներ, որից հետո ավելացնում է. «Այն, ինչ վերագրվում է Մարտիկին, ամբողջությամբ, առանց հավելումների կարելի է դիտել հասցեագրված եւ Անդրանիկին, եւ Աղբյուր Սերոբին, եւ Գեւորգ Չավուշին...» (*նույն տեղը, էջ 27*):

Այսպես՝ Մարտիկի կերպարի մեջ կարելի է տեսնել հայրենասեր բոլոր հերոսներին՝ Հայկ Նահապետից մինչեւ Անդրանիկ: Բայց Մարտիկն ավելի հեքիաթի հերոս է, հեքիաթային կերպար, որի արարչությունն ազգային դյուցազներգությունն է, ինչն իր մեջ խտացնում է ժողովրդի ազատագրական պայքարի բոլոր ձգտումները, մի բան, որ բխում է վեպի ու հատկապես Մարտիկի կերպարի բուն հայեցակարգից: Դրանից հետո նրան որ պատմական հերոսի հետ ուզում ես նմանեցրու, եւ այդ հերոսները նրան կնմանվեն, իսկ հաշվի առնելով պատկերված որոշակի ժամանակը՝ հատկապես ֆիդայիներին: Սպիտակ ձիավորն անընդհատ պտտվում է Զեյնապի շուրջբոլորը: Աշուղ Նազարը նրանց սիրո երգն է հյուսում, իսկ Հաճի Մուսայի լռությունը երկաթի ծանրություն է ստանում: Այս ընթացքում ֆիդայիները կռվում են թուրքական կանոնավոր բանակի դեմ: Կռվի թեժ օրերին Զեյնապը փախչում է Հաճի Մուսայից եւ, Մարտիկին հանդիպելու հույսով, գնում դեպի լեռները: Նրան ընդունում են ինչպես լեռների հարսնացու: Բայց նրան ու Մարտիկին վիճակված չէր հանդիպելու բարեբախտությունը. նախատեսված հանդիպումից առաջ Հաճի Մուսայի հետ մի թեժ կռվի ժամանակ Մարտիկն սպանվում է, իսկ Զեյնապը շատ ավելի ուշ հետ է վերադառնում, որպեսզի վերստին փորձի գտնել Մարտիկի հետքերը: ➥ *էջ 4, 7*

Ներսես Շնորհալու ստեղծագործությունների մանկավարժական բնույթը

«Վիպասանութիւն պոեմը»՝ որպես հայ ժողովրդի պատմության դասագիրք

12-րդ դարի խոշորագույն բանաստեղծ Ներսես Շնորհալին ծնվել է 1100–1102 թվականներին Կիլիկիայի Ծովք ամրոցում: Շնորհալին սերում է Պահլավունիների տոհմից. Գրիգոր Մագիստրոսի դստեր որդու՝ Ապիրատ Պահլավունու որդին է: Վերջինս մի շարք այլ իշխանների հետ գաղթել էր բուն Հայաստանից եւ հաստատվել Կիլիկիայի Մարաշ գավառի Ծովք բերդում: Շնորհալին դեռ շատ փոքր էր, երբ նրա հայրն սպանվում է Ծովքի պաշտպանության համար մղվող մարտում: Ապիրատ Պահլավունին ուներ չորս որդի՝ Վասիլ, Գրիգոր, Ներսես եւ Շահան անուններով: Գրիգորին եւ Ներսեսին իր խնամքի տակ է վերցնում Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը եւ ուղարկում նրանց ուսանելու Կարմիր վանքում, որտեղ դասավանդում էր ժամանակի նշանավոր վարդապետներից մեկը՝ Ստեփանոս Մանուկը: Սակայն երկու տարի անց վախճանվում է նաեւ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը: Նրա մահից հետո եղբայրների խնամքն իր վրա է վերցնում Բարսեղ Անեցի կաթողիկոսը: Կարմիր վանքում երկու եղբայրներն ստանում են հիմնավոր կրթություն: Գրիգորն արդեն 20 տարեկանում դառնում է կաթողիկոս, Ներսեսն էլ ձեռնադրվում է սարկավագ, ապա քահանա, իսկ հետագայում ստանում եպիսկոպոսի աստիճան: Հայրապետական աթոռը տեղից տեղ էր դեգերում՝ թշնամիների շարունակական հարձակումների պատճառով: 1116 թվականին այն հաստատվում է Ծովքում, իսկ 1150 թվականից՝ Հռոմկլայում, որտեղ էլ Ներսես Շնորհալին ծավալում է իր եռանդուն գործունեությունը: Այս բերդաքաղաքի անունով էլ հաճախ նրան կոչել են Կլայեցի: 1166 թվականին հենց իր եղբոր ձեռքով, որն այլեւս ի վիճակի չէր կատարելու կաթողիկոսի պարտականությունները, օծվել է կաթողիկոս: Ներսես Շնորհալին մահացել է 1173 թվականին: Թաղվել է Հռոմկլա ամրոցում: Հայ Եկեղեցին նրան դասել է սրբերի շարքը, եւ նրա հիշատակը նշվում է ամեն տարի՝ Թարգմանչաց տոնին: «Ընդհանրապես Շնորհալին Հայ Եկեղեցու այն սրբացված անուններից է, որի գրվածքները, անգամ զգեստները պահպանվել են հատուկ խանդաղատանքով եւ հասել են մինչեւ 19-րդ դար: Երբ Վիկտոր Լանգլուան 1852–1853 թվականներին Նապոլեոն Երրորդ կայսեր հանձնարարությամբ մեկնում է Կիլիկիա՝ հնագիտական պեղումների, այցելում է Սսի կաթողիկոսին: Այստեղ նրան ցույց են տալիս մի եմիփորոն ու ասում, թե այն պատկանում է Ներսես Շնորհալուն» (*Ա. Դոլուխանյան, Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, Երեւան, 2012, էջ 39*): Բացի Շնորհալուց՝ արժանացել է նաեւ Հայոց Երկրորդ Լուսավորիչ, Տիեզերալույս վարդապետ, Երանաշնորհ սուրբ, Համահրեշտակ, Երգեցող եւ այլ պատվանունների:

Որպես հասարակական գործիչ եւ մտավորական՝ Ներսես Շնորհալին մեծ ավանդ ունի Կիլիկիայի հայկական իշխանության, պետականության կայացման գործում: Մինչեւ կաթողիկոս դառնալը նա եղել է իր եղբոր անբաժան ուղեկիցն ու խորհրդատուն, անմիջական մասնակիցը բոլոր կարեւոր իրադարձությունների: Ամբողջ կյանքում թե՛ իր հասարակական գործունեությամբ եւ թե՛ ստեղծագործություններով Շնորհալին ձգտել է Կիլիկիայում կրթական գործը բարձր մակարդակի հասցնել՝ համեմատության չափանիշ ունենալով հունական կրթական կենտրոնները, ձգտել է կատարելագործել ուսումնական ծրագրերը, հագեցնել դրանք նոր, աշխարհիկ առարկաներով:

Ներսես Շնորհալին թողել է գրական հարուստ ժառանգություն՝ արձակ (մեկնություններ, նամակներ, ճառեր) եւ չափածո (շարականներ, գանձեր, ներբողներ, աղոթքներ, հանելուկներ, ուղերձներ, պոեմներ եւ այլն): Արձակ գործերից նշանավոր են նրա՝ կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ արտասանած «Ատենաբանութիւն» կոչվող հրապարակային ճառը, «Թուղթ ընդհանրական», «Գիր հաւատոյ», «Սահմանք հաւատոյ Հայաստանեայց», «Յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ» գործերը, որոնց մեջ հեղինակը շարադրել է հայոց դավանանքի հիմնական սկզբունքները: Շնորհալին հեղինակ է նաեւ մի շարք կրոնաաստվածաբանական երկերի՝ «Մեկնութիւն Մատթեոսի ավետարանի», «Մեկնութիւն վասն ինն երանութեանց», «Մեկնութիւն բարձրացուցեք ճառին Դավիթ» եւ այլն: Նշանավոր են «Վիպասանութիւն», «Ողբ Եդեսիոյ», «Բան հաւատոյ», «Յիսուս Որդի» պոեմները: Կարեւորագույն սկզբնաղբյուր են Շնորհալու նամակները, որոնք հիմնականում վերաբերում են Հայ եւ Բյուզանդական Եկեղեցիների միության խնդրին: Շնորհալին ընդարձակել է շարականի, գանձի, աղոթքի թեմատիկ սահմանները: Առանձնապես բարձր արվեստով է հորինված Վարդանանց հերոսներին ձոնված «Նորահրաշ պսակաւորը»: Դարեր շարունակ լայն ժողովրդայնություն են վայելել «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Զարթիր, փառք իմ» երգերը: Շնորհալին առաջին հայ մանկագիրն է, մանկավարժական-ուսուցողական բանաստեղծության հիմնադիրը: Հանելուկի՝ որպես գրական տեսակի մշակման եւ կատարելագործման առաջնահերթությունը եւս Շնորհալուն է պատկանում:

Ներսես Շնորհալին եղել է նաեւ երգահան եւ երաժիշտ: Որպես երգիչ՝ Շնորհալին ինքն է եղել իր բազմապիսի ստեղծագործությունների առաջին կատարողը: Դրա մասին են վկայում միջնադարում նրա գործերին տրված «քաղցր եղանակաւ» եւ նման այլ գնահատականները, նրա երգող կամ երգեցող մականունը:

Շնորհալին զգալիորեն հարստացրել եւ կատարելագործել է մեր տաղաչափական համակարգը: Նրանից առաջ էլ հանգը բանաստեղծության մեջ գործածել են Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոսը, Վարդան Անեցին, Հովհաննես Իմաստասերը, Վարդան Հայկազնը, Գրիգոր Մարաշեցին, բայց այն տիրապետող է դառնում Շնորհալու ստեղծագործությամբ: «Ներսես Շնորհալին նորարար էր տաղաչափության մեջ, փոփոխում է բանաստեղծության ոտքերի չափը, գրում է քառյակներ, կատարում նորամուծություններ, որոնք մտնում են հայ գրականության պոետիկայի մեջ եւ պահպանվում են մինչեւ նոր ժամանակները» (*Ա. Դոլուխանյան, Ֆելիքս Նեւը եւ հայ քրիստոնեական մատենագրությունը, Երեւան, 2001, էջ 38*): Նա ստեղծագործել է հայկական չափերի գրեթե բոլոր տեսակներով եւ դրանց մեծ մասի առաջին կիրառողն է:

Շնորհալին մեր այն քիչ հեղինակներից է, որի ստեղծագործությունը հիմնականում պահպանվել է: Նրա մասին գրել են Ներսես Լամբրոնացին, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Բարձրաբերդցին, Մատթեւոս Ուռհայեցին, Սամուել Անեցին:

Շարունակելի

Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ
ԵՊՀ-ի աստվածաբանության ֆակուլտետի ասպիրանտ, ՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետի մագիստրոս

Հերոսների դրամատիկ հոգեվիճակները «Գեւորգ Մարզպետունի» վեպում

Սկիզբը՝ թիվ 6, 8

Պենության մեջ ինքնաոչնչացման դատապարտված Աշոտ Երկաթին տանջում է ոչ միայն իր ժողովրդի օրհասական վիճակը, որի միակ մեղավորն ու պատասխանատուն ինքն է, ոչ միայն իր անփառունակ ներկան, այլեւ սիրած կնոջ՝ Ասպրամի ճակատագիրը, որի դժբախտության ու կործանման միակ մեղավորն ինքն է. թերեւս դա նրա համար վշտերից ծանրագույնն է: Արքան գիտակցում է, որ ինքն է խաթարել Ասպրամի ընտանեկան խաղաղությունը, նրան զրկել կանացի երջանկություն ունենալու աստվածային պարգեւից, անարգել նրա կանացի պատիվը. «Բայց այնտեղ, Սեւորդյաց լեռների մեջ, Տավուշի մթապատ խորշերում հեծում է մի դժբախտ կին, սիրո հարվածներից ջախջախված մի սիրտ, որին թողել են ամենքը, որ կտրված, բաժանված է աշխարհից, որ ապրում է միայն յուր անարգանքի, յուր նվաստության հետ... Այդ կնոջ մրմունջը հասնում է մինչեւ իմ գահույքը. նա շշնջում է իմ ականջին դառն ու սրտահույզ խոսքեր. «Մի՛ ծիծաղիր, երբ լալիս եմ ես, մի՛ զվարճանար, երբ սգում եմ ես. արդ ի՞նչ իրավունքով ես պիտի նորեն աշխարհ մտնեմ, կյանքի բարիքները վայելեմ, քանի որ յուր սիրտն ու էությունը ինձ նվիրող կինը կենդանի թաղված է անհայտության մեջ»,– խոր տառապանքով ասում է արքան՝ հիշելով իր կործանված սերը (էջ 285):

Թվում էր, թե արքային ոչինչ այլեւս չէր կարող ապրելու հույս ներշնչել, առաջ նայելու հավատով լցնել, սակայն երբ նա անձամբ գնում է դիմավորելու Սեւանի կղզի եկած քաջերին ու լսում է նրանց՝ «Կեցցե՛ թագավորը» բացականչությունները, հուզվում է, այդ ձայնը կարծես նրան սթափեցնում է, հիշեցնում, որ ինքը Հայոց Աշոտ Երկաթ արքան է. «Մի հաճոյական եւ կենարար դող նրա մարմինը ցնցեց եւ քաջազնական զգացմունքով հոգին ու սիրտը լցվեցան» (էջ 290): Թերեւս հենց այս բացականչություններից առաջացած զգացողությունը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ Գեւորգ Մարզպետունին ընդամենը 20 քաջերով որոշել էր պայքարել թշնամու դեմ՝ քաջ գիտակցելով զորքերի անհավասարության հնարավոր հետեւանքները, շարժում են արքայի պատվասիրությունն ու ստիպում հավաքել ուժերն ու հաղթանակ տանել Սեւանը գրավել ցանկացող Բեշիրի բանակի դեմ: «Երկու զորավոր պատճառ ստիպում են ինձ այդ քայլն անելու. առաջինը՝ իմ արքայական պատվասիրությունը: Այս գոռոզ, հագարացին համարձակվեցավ պատգամավոր ուղարկել ինձ եւ Սեւանը պահանջել՝ անվանելով այն ամիրապետի կալված... Ես պիտի հարձակվեմ, որովհետեւ ամոթ է, որ Աշոտ Երկաթը Գեւորգ իշխանի չափ գոնե կորով չարտահայտե այս դեպքում...» (էջ 310):

Սեփական անձի նկատմամբ միայն ատելությամբ լցված, ինքն իրեն անընդհատ խարազանող արքան միայն մի ելք է գտնում խղճի խայթից ու ամոթի զգացումից ազատվելու համար՝ մահը, ուստի նա ուրախանում է անգամ, երբ իմանում է, որ թունավոր նետով է խոցվել. «Բեշիրի դեմ մղած ճակատամարտում ես մահ էի որոնում, բայց միայն վերք ստացա եւ այնպիսին, որ երկար ինձ տանջեր եւ հանցանքներս հիշեցնելով կեղեքեր իմ հոգին» (էջ 343):

Երբ Գեւորգ Մարզպետունին փառահեղ հաղթանակներ է տանում, Աշոտ Երկաթը վերադառնում է Երազգավորս, կրկին նվիրվում է երկրի գործերին, թեեւ ոչ մի ոգեւորություն նրա սիրտն այլեւս չի ջերմացնում. նա մտածում է մութ զնդանում փակված Ասպրամի մասին: Շուտով արքան Գեւորգ իշխանի գրած նամակից իմանում է, որ Ասպրամն ինքնասպան է եղել (նամակում Մարզպետունին ուղղակիորեն դատապարտում է արքային՝ չմտածելով, թե ինչ հետեւանքներ դա կարող է ունենալ): Այս հարվածն արդեն անդառնալի է դառնում Աշոտ Երկաթի համար: Հիվանդ արքան այլեւս չի դիմանում խղճի խայթին: Մահվան մահճում անգամ նա չի կարողանում ինքն իրեն ներել, ներել մի թուլության համար, որն անդառնալի հետեւանք ունեցավ առաջին հերթին իր համար: ➥ *էջ 7*

Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» վեպը

➥ էջ 2

Ընդհարումը նախ Վարդաձորի շուրջ է, այնուհետեւ ընդգրկում է ամբողջ Հայոց աշխարհը: Հայ գյուղացու զայրույթն այնտեղ է հասնում, որ դիմում է պատասխան քայլերի եւ հրդեհում քրդաբնակ Զեյվա գյուղը: Սա նաեւ հոգեբանական արժանապատվության պահ է, որովհետեւ ժողովուրդը հաղթահարում է հալածվածի խեղճությունը եւ հավատում իր ուժերին: Երկու ասորի գինետանը խոսում են. «....էս հայերը ինչ կ'ուզեն էս աշխարհէն: <....>: Ասորին, չէրքէզը, սուրիացին, ես ինչ գիտեմ, հազար ու մի ազգեր եօլա կ'երթան, ֆախաթ էս հայը եօլա չկրցավ երթալ ու աշխարհը կրակի է զարկեր՝ իրաւունք ու արդարութիւն կը պահանջէ» (էջ 462):

Հեղինակն աննկատ մուտք է գործում ֆիդայիների առասպելական աշխարհը, որոնք նրան հիշեցնում են Օլիմպոսի վրա հավաքված Հոմերոսի հզոր հերոսներին: Ահա լեռների որդիները նստած են ժողովի: Նրանց գաղափարական առաջնորդը հայկական շարժման ղեկավար, ռուսական պետական համալսարանի նախկին դասախոս, ռուսերեն ու գերմաներեն մի քանի գրքի հեղինակ դոկտոր Նայիրյանն է, որը թողել է ամեն ինչ եւ նվիրվել գլխավորին՝ ազգային գործին, իրականացրել է սուլթանի մահափորձն ու կազմակերպել գյուղական դպրոցների գործունեությունը, ինքն էլ, թողնելով ժնեւյան միջավայրը, աշխատել է ուսուցիչ, անգամ, մտահոգվել քրդերի համար այբուբեն ստեղծելու հարցով: Ահա, նրա ղեկավարությամբ առանձնանում են կերպարներ՝ Վարդան, որ ժնեւում ուսանող էր եւ, լսելով Նայիրյանի դասախոսությունը, նվիրվում է ազգային գործին, Չերչի Կիրոս, Արջ Սաքո, Սերոբ, Կարմիր Սերոբ, Խեչո, Մարգար: Ազնվություն, անձնազոհություն, նաեւ մարդկային թուլություններ. «Իր ծանր զանգուածով ու արջի կերպարանքով՝ Սաքօ երկնքի մօտ ապրող իմաստուն երախայ մըն էր: <....>: Այն օրէն ի վեր, երբ ֆէտայիներուն մէջ կնոջ խնդիր մը մէջտեղ կուգար, Սաքոյի մարմինը սեւ ցաւ առնող ձիու մը պէս կը դողար....» (էջ 315, 317): Բացվում են շատ փակագծեր: Ֆիդայիների շարքը մտած մաքսանենգ Կարպիսը մի աննշան վեճի պատճառով մատնում է զենքի պահեստների տեղը, թուրք կառավարությունից ստանում ամսաթոշակ, ի վերջո, ահաբեկության ենթարկվում ճակատին ստացած գնդակով: Ահաբեկիչը 20-ամյա ուսանող Կարոն էր, որ հետո լեռները պիտի ելներ, բայցեւ դառնար Զարեհի հանդեպ տածած սիրո զոհը, քանի որ անօրեն տարփանքի պատճառով պիտի զրկվեր ֆիդայու կոչումից, զենքը հանձներ եւ իջներ սարերից:

Ամեհի է Մարգարը կռվի պահին, նույն մոլեգնությամբ նրա կողքին է Սռման: Դադարին, երբ իր շուրջը հավաքված կանանց Սռման կռվի մասին էր պատմում, եւ նրա կողքով անցնում էր Մարգարը, «Սռման զգաց, որ լեռներու վրայէն ծանրութիւն մը կ'անցնէր» (էջ 233): Այս ծանրության դողն անցնում է ոչ միայն նրա հոգու, այլեւ մարմնի միջով. Պզկան քարերը գիշերով ջրի գնացած Սռմայի ու Մարգարի հանդիպումը գաղտնի չի մնում, գյուղը ամեն տեղ աչք ունի, եւ ֆիդայությանն ստիպված հրաժեշտ պիտի տա նաեւ Մարգարը, ինչը նա անում է ճակատագրական մահացու կռվի մեջ նետվելով: Ազատ սերն այսպես պատուհասում է ոմանց, որովհետեւ լեռնային վրիժառուների օրենքով չէր (*դատապարտված սիրո այսպիսի մի իրական պատմություն է ընկած Կ. Զարյանի «Տատրագոմի հարսը» պոեմի հիմքում (1930, Բոստոն), որի տպագրությունը նախորդել է Համաստեղի վեպին եւ վստահաբար ինչ-ինչ ազդակներ հաղորդել*):

Այս հարցերն առանձին դեպքերի նկարագրությամբ արծարծված են «Կինը լերան վրա» գլխում: Սարկավագ Սարգիսը նույնիսկ համոզված էր, որ «....մարդուն շուրջ միշտ աներեւոյթ կիներ կան» (էջ 310): Առաջինը Կարոն է, որի «լռութեան մէջ կնոջ մը կերպարանքը կը դառնար» (էջ 310). այդ կարոտով էլ նա իջնում է լեռներից: Սիրո այս փակ առեղծվածը համարվում է ոչ միայն մարդկային թուլություն, այլեւ ազգային չարիք. «Որ էսպէս երթայ՝ հայոց աշխարհի վրայ ժաժքն ալ կուգայ, թուրքն ալ» (էջ 331): Մարգարի կապակցությամբ. «Այո՛, այո՛, եթէ Մարգարը ծռի հայոց աշխարհի արեւը թերս կը ծագի, ցորենները կը ժանգոտին....» (էջ 311): Հրացանները, որ սարից իջնողները պարտավոր էին հանձնել, նրանց համար տառերի ձեւ ունեին. «Առքօն գիտեր նաեւ, որ հայկական տառերը թիւֆէնքի ձեւ ունեին» (էջ 311), այսինքն՝ սրբություն էին:

Կանանց «զարհուրելի» փորձանքի կապակցությամբ՝ որպես դաս, հիշվում են ֆիդայիների հետ կապված անցած-գնացած ճակատագրական պատմություններ: Այդ փորձությանը վեպում ենթարկվում են ֆիդայիներ Կարոն, Մարգարը, Առքոն, դրանով նրանք ստորագրում են իրենց դատավճիռը: Այս հարցում նրանք վերահսկում էին իրար եւ որեւէ շեղում նկատելիս հայտնում, ժողով գումարում ու դատավճիռ կայացնում. «Լեռը կարծես ձեռքը իր ճակատին

տարած էր ու ինկած ծանր խոկումներու մէջ» (էջ 314):

Հերոսացումից առաջ հուզիչ է հրաժեշտի տեսարանը՝ բանջարքաղի դուրս եկած լեռնային գեղեցկուհի Սռման եւ լեռների հավատարիմ որդին՝ Մարգարը, վերջին անգամ պիտի հանդիպեին: Վերջինիս գիտակցված մահը ներկայացված է մի առանձին վերնագրի ներքո՝ սիրո հրդեհին մատնվածի եւ իր արարքի հետեւանքը տեսնողի ողբերգական, հերոսական եւ ազդեցիկ մահ. կամ, որպես ամուսնացած կնոջ, դավաճանության համար Մարգարը Սռմային պետք է սպաներ ու վերադառնար ընկերների մոտ, կամ հերոսական սխրանքով ավարտեր իր կյանքը: ➥ էջ 7

Վանեցի այգեգործը, հայ ազատագրական շարժման գործիչն ու անվանի գեղանկարիչը



Փ. Թերլեմեզյանը եւ Կոմիտասը

Հայ ազգային-ազատագրական շարժման կարեւորագույն կենտրոններից մեկը եղել է Վանը, որը 19-րդ դարի երկրորդ կեսում ապրում էր ազգային մեծ զարթոնք: Վանում վերոնշյալ ժամանակաշրջանում բուռն ու բերքառատ գործունեություն են ծավալել հայ ազգային-ազատագրական մտքի եւ շարժման անվանի գործիչներ Մկրտիչ Խրիմյանն ու Մկրտիչ Փորթուգալյանը, որոնց անձնազոհ ու անդադրում ջանքերի շնորհիվ ասպարեզում հայտնվեց ազգային իրավունքների համար մաքառողների մի նոր սերունդ, որոնց շարքերում, անշուշտ, պետք է դիտարկել նաեւ գեղանկարիչ, ազգային-հեղափոխական գործի ու մտքի անդավաճան նվիրյալ Փանոս Թերլեմեզյանին:

Փ. Թերլեմեզյանը ծնվել է 1865 թ. մարտի 11-ին Վան քաղաքում: Թերլեմեզյան տոհմը նախկինում ապրել էր Մոկսում: Նրանք Մոկսից են գաղթել Վան: Մոկաց Թալամազ գյուղից մնում է տոհմի ազգանունը՝ Թալամազենց կամ Թալամազյան, հետագայում այն վերափոխվել է Թերլեմեզյանի: Նրանց տոհմը բնակվել է Վանի Այգեստան թաղամասում: Թերլեմեզյանները մեծ գերդաստան էին: Նրանք իրարից բաժանված եւ իրենց այգիներում մեծ-մեծ տներ շինած տոհմ էին եւ բնակվում էին կողք կողքի: Միայն նրանց մի եղբայրը՝ Մուղդուսի Մուրադը, Այգեստանի կենտրոնից հեռու՝ Խամուր Քեսենի վրա, տուն էր կառուցել եւ այնտեղ էլ ապրում էր: Հենց այդ ընտանիքից 19-րդ դարի երկրորդ կեսում սերեցին երեք աչքի ընկնող եղբայրները՝ Կարապետ, Մկրտիչ եւ Գրիգոր (Գրիգորիս) Թերլեմեզյանները: Նրանցից Մկրտիչ Թերլեմեզյանին (Ավետիսյան) վիճակված էր դառնալ հայ քաղաքական անդրանիկ կուսակցության՝ արմենականների հիմնադիրն ու ճանաչված առաջնորդը: Վանի հասարակության մեջ նա առավելապես հայտնի էր Ավետիսյան ազգանունով եւ այդպես էր ստորագրում իր հոդվածները «Արմենիա» եւ այլ պարբերականներում: Մ. Ավետիսյանը զոհվեց 1896 թվականի հունիսյան ինքնապաշտպանական մարտերում՝ դեպի Պարսկաստան նահանջի ժամանակ: Նրա նահատակության լուրը սգի մատնեց Վան-Վասպուրականի ողջ հասարակությանը:

Փանոս Թերլեմեզյանի մանկությունն ու պատանեկությունն անցել են տխուր ու աղքատիկ տան մեջ՝ լեցուն ամենօրյա ծանր հոգսերով ու զրկանքներով: Հայրն սկզբնապես զբաղվել էր երկրագործությամբ, հետո տրվել հարբեցողության եւ գործի անընդունակ էր դարձել: Ընտանիքի ապրուստի հոգսն ամբողջովին ընկած էր մոր ուսերին, որն աշխատում էր օրն ի բուն:

Ապագա նշանավոր գեղանկարիչը նախնական կրթությունն ստանում է Հանկույսների ձորի ծխական դպրոցում, որը տեղացիք անվանում էին «ժամու վարժատուն»: Այդ դպրոցում այնպիսի խիստ ու դաժան՝ տերթոդիկյան կարգեր էին հաստատվել, որ նկարիչն այն անվանում է «վարժարան-սպանդանոց»: Հինգ տարի այդ դպրոցում սովորելուց հետո նա եւս երկու տարի ուսումնառում է Տիգրան վարժապետի մոտ, որից հետո ընդունվում է Վանի «Կեդրոնական» վարժարան, որը բացվել էր աննկուն հայրենասեր Մկրտիչ Փորթուգալյանի համառ ջանքերով: Այստեղ կրթական բարձր մակարդակ էր ապահովվում, եւ ուսուցումը կատարվում էր լավագույն մեթոդներով: Նկարչի վկայությամբ՝ «Իմ անզուսպ եւ կիսավայրենի բնավորությունը այդ դպրոցը մեղմում էր եւ հետզհետե ընտելացնում էր կիրթ կենցաղի»: «Կեդրոնական» դպրոցում դասավանդում էին ժամանակի լավագույն ուսուցիչները: Բոլոր առարկաներից նկարիչը գերազանց նիշեր է ստացել, սակայն ամենից շատ սիրել է աշխարհագրությունը եւ հին ազգերի պատմությունը: Հայոց պատմությունն արգելված է եղել թուրքական իշխանությունների կողմից, բայց այն դասավանդվել է գաղտնի: Այդ օրերի մտայնությունների շուրջն է փաստարկում գեղանկարիչը հետեւյալ ինքնախոստովանանքով. «Թյուրքերեն պետական լեզուն շաբաթական մի ժամ էինք սովորում այն ուտոպիկ եւ ողբալի մտայնությամբ, որ իբր թե շուտով հայկական իշխանություն է լինելու, ու այլեւս պետք չենք ունենա թյուրքերենի»:

Ուսումնառության տարիներին ի հայտ են գալիս նրա գեղանկարչական ընդունակությունները. «Ես մեծացրի Գրիգոր Արծրունու, Ռաֆֆիի եւ Միքայել Նալբանդյանի ֆոտոգրաֆները, որոնք շատ հավանեցին: Փորթուգալյանը նկարները ուղարկեց քաղաքամեջ, կահագործ վարպետների, որ շրջանակներ շինեն: Այն ժամանակները ես ռուսական կոնսուլ Կամսարականի լուսանկարն էլ մեծացրի եւ իրեն նվիրեցի: Նա շատ ուրախացավ եւ ինձ տվեց Քյուրքչյանի հանած 44 լուսանկարները՝ սթերոսկոպով միասին»: «Կեդրոնականում» աշակերտները ոչ միայն մտավոր, այլեւ ֆիզիկական լարված ծանրաբեռնվածությամբ էին պարապում: «Մեր դպրոցի մի խումբ աշակերտներս աշխատում էինք լավ նշանաձիգներ դառնալ, դարձանք: Լողորդության մեջն էլ հաջող էինք, բայց ձիավարության մեջ կաղում էինք: Գիշերներից մեկում երեք ընկերով դաշտ էինք դուրս եկել, ձյուների մեջ երկար քայլելու, որպեսզի ցրտին եւ դժվարություններին վարժվեինք: Առավոտյան դեմ, ցրտից սարսափելի դողով բռնված, դաշտերից վերադարձանք եւ մտանք Նորաշեն եկեղեցին»: ➥ էջ 6

Չարենցյան հետքերով

Էսսեի փոխարեն՝ գրված Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակի առթիվ

Հայ գրականության ամենամեծերից մեկի՝ Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակը մեկ անգամ եւս առիթ է խոսելու ոչ միայն նրա ստեղծագործությունների, այլեւ մարդկային նկարագրի մասին եւ մանավանդ կյանքի սկզբնական այն շրջանի իրողությունների, որոնք լեցուն եղան ինչպես անձնական, այնպես էլ ազգային բարդ ու ճակատագրական դեպքերով:

Համոզված ենք, որ ամեն ոք, ով այս կամ այն չափով ընթերցել է Չարենցի ստեղծագործությունները, իր հոգու ներսում՝ սրտի մի անկյունում ու մտածումներում, հարազատության, ես կասեի՝ *ազգակցության*, կապեր է հայտնաբերել մեծ գրողի հետ:

Մասնագիտությամբ լինելով գրականագետ՝ հոգեւոր այդ կապերը, բնականաբար, ծնվել են նաեւ իմ մեջ, որոնք հատկապես խորացել ու ամրացել են անձնական կյանքիս երեք իրողություններով, ինչպես կասեր Չարենցը՝ «երեք նետ», որ «դարձել են մի»՝ Մակու, Կարս, Քանաքեռ, որոնք ոչ այնքան անմիջական եւ ուղիղ, որքան պատահականությունների բերումով առնչությունների տեղիք են տվել հեռակա կերպով կապվելու Չարենցի կյանքի որոշ իրողությունների հետ:

Եվ, ուրեմն, պատահեց այնպես, որ կյանքի ուղիները 2011-ին Երեւանի պետական համալսարանի մի հեղինակավոր պատվիրակության կազմում՝ ռեկտոր, դեկաններ, պրոֆեսորներ, մեզ տարան Իրան՝ Թավրիզ, Թեհրան, Սբ Ստեփանոսի եւ Թադեի վանքեր: Միջանկյալ ասեմ, որ ամենքիս հիացումը եղան հոգատար ու վերականգնողական այն աշխատանքները, որոնք իրանական իշխանությունները կատարում էին մանավանդ Սբ Ստեփանոսի վանքի մեծ համալիրում: Ոչ պակաս զարմանք հարուցեց նաեւ այն, որ վանքի տարածքը լեփ-լեցուն էր ուխտատեղի եկած պարսիկ ընտանիքներով, որոնք մոմեր էին վառում, խաչակնքում, պարսկերեն մրմնջում:

Բայց դառնամ իմ բուն ասելիքին: Ցանկալի ու հաճելի այդ ուղեւորությունը ձգվեց ու հասավ մինչեւ Մակու, Չարենցյան խոսքերով ասած՝ «Խանի Մակու», որն ըստ էության ինչպես ստեղծվել էր, այնպես էլ մնացել էր նույնը՝ երկու խորխորատ ժայռերի արանքում ծվարած, հորդ գետի ափին թառած եւ սարալանջն ի վար ընթացող ընդամենը մի փողոցից բաղկացած բնակավայր՝ աջ ու ձախ կողմերում երերուն կանգնած միհարկանի հողե կամ պատահական քարերով կառուցված կիսախարխուլ տներով: Միակ երկհարկանի շինությունը հյուրանոցն էր, որը կիսով չափ հենվել էր ժայռաբեկորին, եւ որտեղ էլ մենք անցկացրինք մեկ գիշեր: Եթե ձորակի ներքեւից վեր նայես, երկնքի հազիվ մի կտոր է երեւում. չկա ոչ մի հորիզոն, ճար ու ճանապարհ, լուսավոր որեւէ կետ: Ամեն ինչ խլության ու խավարի մեջ է թաթախված: Եվ այդ պայմաններում, աշխարհից կտրված այդ ամայության մեջ ինչպե՞ս են ապրել մարդիկ, որոնցից երկուսն էլ Չարենցի ծնողներն են եղել՝ հայրը՝ գորգավաճառ Աբգար աղան (Աբգար Սողոմոնյան), ու մայրը՝ Թելլի Միրզայանը, որոնք իրենց տխուր կյանքի բազում գիշերներից մեկում էլ չեն քնել եւ երբ ճամփա են ընկել դեպի Կարս՝ բնակվելու, արդեն ծոցվոր դարձած մայրն իր հետ տարել է նաեւ դեռեւս չծնված ապագա բանաստեղծին: Ձնվա՞ծ: Այո՛, բայց արդեն ձեւավորվող: Եվ մ՚դ չէր միթե պատճառը, որ տարիներ հետո նա իր «Չարենց-նամե» պոեմում պիտի գրեր.

Ես եկել եմ հեռո՛ւ Իրանից:
Հայրենիքս է — Խանի Մակուն (*Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երեւան 1955, էջ 44)*:

Ասում են՝ գիտնականներն ապացուցել են, որ ձեւավորվող երեխան մոր փորում լսում է արտաքին աշխարհի ձայները եւ մանավանդ՝ երաժշտությունը: Ո՞վ կասի՝ ինչպես է սաղմնավորվել չարենցյան հանճարի փայլատակումը, ինչեր է լսել մոր որովայնում բաբախող ապագա բանաստեղծը՝ իրենց տան ներքեւից հոսող գետի ահեղամռունչ շառաչը, որը հետո պիտի դառնար կյանքի աղաղակ, աջ ու ձախ ձգվող քարակոփերից թափվող զանգվածների աղմո՛ւկը, սիրտ պատռող անելանելության դատապարտվածությո՛ւնը կամ քարահոդաշեն իրենց տան մենության լռությունը, գուցե եւ այդ բոլորի ամբողջությունը, որն արդեն Ղարսում լույս աշխարհ գալուց հետո պիտի խորանար, ձեւ ու բովանդակություն ստանար մի ուրիշ «անգո»-ի տեսքով՝ «Անունը... Երկիր Նաիրի՝» այս անգամ մարմնացած Ղարս գետի «քչքչան ջրերի» խշշոցից, գետեզերքից ոչ հեռու գտնվող իրենց տան կապտավուն որձաքարերի ամրությունից, այդ նույն տան դիմաց տարածվող Ղարսի այգուց ու նաեւ հայրական այգուց, որտեղ բարձրանում էր թթենին, բայց մանավանդ անհունին ձգտող նրա երազանքներից եւ մանավանդ անհողդողդ այն համոզմունքից, որ օրը կգա, ու «ուղեւորները հոգնաբեկ»՝ հեռավոր բարեկամներն ու քույրերը, որպես «կապուտաչյա սիրուհի», պիտի իջնեն, պիտի դառնան ճամփեքից, ու անպայման լինելու է «քաղցր ժպիտ ու խնդություն», եւ լույս է վառվելու մառախուղում ու մուժում:

Հնձում են հիմա հնձվորներն այնտեղ.—
Ճերմակ սիրուհի՛, կապուտաչյա քո՛ւյր...
Արեւը հիմա այրում է այնտեղ
Խեղճ հնձվորների կրծքերը մաքուր...
(*Ե. Չարենց, Երկերի ժողովածու, Երեւան 1963, էջ 12):*

«Կապուտաչյա Հայրենիք» անունը չարենցյան պոեզիայում համընդհանուր բովանդակությամբ է հանդես գալիս՝ լեցուն Իրանի «ոսկի, ոսկի՛ արեւով» եւ «նաիրյան տխրությամբ անծիր»: «Կապուտաչյա Հայրենիք» բառակապակցության երկու բառն էլ Չարենցը պոեմի վերնագրում գրում է գլխագրով: Ասել է թե՝ Գալիք Հայաստան, «Արեւների նման պայծառ, լուսավոր// Ճաճանչների նման Վահագն Աստղծո», որը նրա պատկերացումներում հանդես է գալիս որպես հայ ժողովրդի դարավոր երազանք, անկախ ու հզոր «մի երկիր սիրված»՝ լի տուն դարձող հնձվորներով եւ աստվածային օրհնություններով: Բայց եղավ այն, որ երկիրը դարձավ որբ ու ավերակ: Երազ երկիրը, այդ թվում՝ Ղարսն ու ղարսեցին: ➥ *էջ 8*

Երկու հպանցիկ հանդիպում մեծն Հովհաննես Շիրազի հետ

Վեռավոր 1975-ի սեպտեմբերյան մի խաղաղավետ երեկո Երպետհամալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս Սմբատ Ավագյանն ինձ ու համակուրսեցուս՝ Կարինե Արամյանին «Արմենիա» հյուրանոց տարավ: Այստեղ մենք այցելեցինք Մոսկվայից ժամանած հայտնի գրականագետ պրոֆեսոր Արշավիր Արշարունուն:

Զրույցի ընթացքում պրոֆեսորը մեզ պատմեց ԽՍՀՄ-ի հիմնադիր Վ. Ի. Լենինի հետ իր հանդիպումների մասին, խորին ակնածանքով հիշատակեց ժամանակի լուսավոր մարդկանցից Ա. Լունաչարսկու, Ն. Մառի անունները, որոնց հետ 1920-ական թվականներին աշխատել է, հիմնադրել եւ խմբագրել «Գրական հանրագիտարան»-ը եւ այլն, եւ այլն:

Մոտ երկու ժամ տեւած զրույցն ասես մեր համալսարանական դասի շարունակությունը լիներ՝ ակադեմիական կոկիկ խոսքով ու ոճով, եւ անկեղծ ասած՝ այսօր այդ հանդիպումից սրտումս էական բան չի մնացել: Այ, ուրի՛շ էր քիչ անց Ամիրյան փողոցում Հովհաննես Շիրազի հետ մեր՝ թեկուզեւ շատ կարճատեւ, «ոտքի վրա» պատահական հանդիպումը: Հախուռն, բնական, մարդկային ջերմությամբ առլեցուն այդ քաղցր հուշ-պատառիկը հիմա էլ վառ է իմ սրտում...

....Մաշտոցի պողոտան ողողած լույսերի միջով ահա դեպի մեզ է գալիս ժողովրդի պաշտելի բանաստեղծը՝ առյուծաբաշ ճակատը վեհորեն աջ ու ահյակ թեքելով, մարդկանց սրտազեղ ողջույններին պատասխանելով:

Մեր դասախոսը, ձեռքերը լայն տարածած, մոտեցավ Շիրազին, ողջագուրվեց ու հանդիսաձայն ասաց.

— Ջերմագին ողջո՛ւյն արդի հայ պոեզիայի Առյուծին:

Պոետական ինքնասիրությունը փոքր-ինչ շոյված՝ Շիրազն ուսերը թեթեւ ցնցեց, լայն ժպտաց ու այսպես խոսեց.

— Գիտեք, ոմանք ինձի Առյուծ կանվանեն, որ ես իրենց աղվես չըսեմ... Դու էդոնցից չես, չէ՞, Սմբա՛տ:

Թնդաց բոլորիս առողջ ծիծաղը:

Լսել էինք, որ ոչ ոք չէր նեղանում մեր անկանխատեսելի կենդանի դասականի դիպուկ բնութագրումներից, թեկուզեւ վիրավորական խոսքից...

— Սե՛րժ, հիմա մեր անունները կհարցնի, ու քո ոչ հայկական անունը «պայթյուն» կառաջացնի, ճարդ տես,— ականջիս տագնապ հնչեցրեց Կարինեն:

Մենք, իհարկե, ծանոթ էինք Շիրազի նաեւ այն բանաստեղծություններին, որոնցում հայրենապաշտ պոետը երգիծել է ոչ հայեցի անձնանունները, խարազանել մեր բնակավայրերի խորթ, օտարաշունչ անվանումները:

Ով խուժել է՝ մի բան տիրել,
Իր անունն է վրան դրել...

— Սմբա՛տ, էս սիրուն ջահելները ուսանողներդ ե՞ն,— ակնաթով հայացքը վրաներս՝ հարցրեց մեր դասախոսին, ապա դարձավ մեզ:

— Ձեր անունները ինձի կբաշխե՞ք:

Լսեց Կարինե անունը, եւ աչքերը նկատելիորեն ժպտացին:

Հարցական հայացքը հիմա էլ ինձ վրա հառեց.

— Սեր,— ասացի՝ անվանս «աղմկահարույց» վերջին տառը ուղղակի «կուլ տալով»:

— Սերո՝ չէ, Սերոբ էլ՝ չէ, ճի՞շտ լսեցի, հենց Սե՞ր:

Ես կրկին հաստատեցի: Եվ նա շիրազավայել ընդհանրացումով եզրափակեց «նոր» անվանս հետ կապված «խնդիրը»՝ ասելով.

— Սե՛ր: Լա՛վ է: Էս աշխարհում ամեն լավ բան սիրուց կծնվե...

....Ճշմարիտ է՝ «պայթյունը» չկայացավ, սակայն մինչեւ օրս հոգուս խորքում կռիվ ու վեճ կա՝ ինչո՞ւ խաբեցի մեծն Շիրազին: Սակայն նույն պահին ներսումս հակընդդեմ մի ուրիշ ձայն էլ է հնչում՝ իսկ ինչո՞ւ վիշտ ու զայրույթ պատճառեի սիրելի պոետին...

* * *

Հիշարժան է 1978-ին Երեւանի Արվեստի աշխատողների տանը Հովհաննես Շիրազին տեսնելու ընդամենը երեք-չորս րոպե տեւած բարեպատեհ առիթը: Այստեղ հանրապետության բոլոր քաղաքներից ու շրջաններից «Գիտելիք» ընկերության պատասխանատուներ, դասախոսներ ու քաղաշխատողներ էին հավաքվել:

Ընկերության պատվավոր նախագահ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի բացման խոսքի ավարտի պահին դահլիճում շշուկներ ալիքվեցին՝ վա՛հ, տեսեք, տեսեք, Շիրա՛զը...

Եվ իսկապես. ահա պատկառազդու պոետը դահլիճի սյունաշարքի կողքով վստահաքայլ անցավ, բարձրացավ նախագահություն: Մի պահ քար լռություն տիրեց, քանզի անկանխատեսելի, միջոցառմանը չհրավիրված, սակայն ամենուր համաժողովրդական անկեղծ սեր վայելող բանաստեղծի մուտքն ուղղակի անակնկալ էր, մեծահամբավ գիտնականը ոտքի կանգնեց ու ջերմ բարեւեց Շիրազին:

— Ժողովրդիս պարծանք-գերաստղ, մեծահարգ Վիկտոր Համազասպի,— ասաց բարձր, խրոխտ ու ընդգծված հարգալիր շեշտով,— նոր լույս տեսած գիրքս եմ Ձեզ ընծա բերել:

Եվ մինչ գիրքը կհանձներ անվանի գիտնականին, բացեց այն էջը, ուր զետեղված ընտանեկան լուսանկարի կենտրոնում ալեհեր պոետն է՝ թեւատարած արծվի պես ութ զավակներին հովանի արած:

— Կուզեմ Դուք էլ, այս մարդիկ էլ, ամեն Աստծու օր ժողովրդին ասեք, որ մեր եղեռնազարկ ազգը միայն բազմանալով, ուժեղանալով պիտի բուժե սրտի խորունկ վերքը... Ահավասիկ, ես դրա օրինակը տվել եմ,— ասաց արագ, հանձնեց գիրքն ու իջավ, քայլերն ուղղեց դեպի դահլիճի ելքը:

Բոլորս ոտքի կանգնեցինք, սրտահույզ, բուռն ու անկեղծ ծափողջյուններով ճանապարհեցինք մեր կենդանի դասականին...

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վանէցի այգեգործը, հայ ազգային շարժման գործիչն ու անվանի գեղանկարիչը



➥ էջ 4

Փանոս Թերլեմեզյանը եւ իր դպրոցական ընկերները այդ տարիներին կարդում էին Ռաֆֆու գրքերը եւ յուրացնում նրա հերոսների անունները: 1885 թ. սուլթանական իշխանությունները փակեցին Վանի «Կեդրոնական» վարժարանը, եւ ապագա նկարիչը հանձնում է երրորդ ուսումնական տարվա քննություններն արդեն բացօդյա հանգամանքներում: Կիսատ թողած կրթության պակասը նա լրացնում է ինքնակրթությամբ. Հետագայում, նաեւ որպես նկարիչ, ուսումնառում է Ֆրանսիայում:

«Կեդրոնական» վարժարանը փակվելուց հետո նա երեք տարի Վանի տարբեր կրթօջախներում ուսուցչական աշխատանքով է զբաղվում, դասավանդում աշխարհագրություն, գեղագրություն եւ գծագրություն: Սակայն մի միջադեպ եկավ կանխելու նրա խաղաղ գործունեությունը: Ինչպես ինքն է նշում. «Հրաժարվեցի ուսուցչությունից եւ աշխատեցի լինել պրոֆեսիոնալ հեղափոխական, այսինքն՝ կազմակերպող, պրոպագանդիստ, գիտենալ ինչպես կայունացնել տատանվող տարրերը եւ գիտենալ ինչպես խուսափել ոստիկանությունից ու շեղել նրա հետապնդումները»:

Հեղափոխական գործունեության մեջ Փ. Թերլեմեզյանը շատ հետաքրքիր ու վտանգավոր արկածներ ունեցավ եւ ամենից կարեւորը՝ էլ ավելի մոտիկից ճանաչեց հայրենի երկիրն ու ժողովրդին: Այդ գործունեության ընթացքում նա շրջում է Վասպուրականի, Մշո դաշտի, Պարսկահայքի բազմաթիվ բնակավայրերում, ծանոթություն ու կապեր հաստատում հարյուրավոր մարդկանց հետ:

Նրա կյանքում կարեւոր ու շրջադարձային է լինում հանդիպումը մեծահռչակ նկարիչ Գեւորգ Բաշինջաղյանի հետ՝ 1894 թվականին Թիֆլիսում: Նրան հայտնում է իր անմարելի երազանքի մասին՝ նկարչություն սովորել եւ նկարչությամբ պարապել: Բաշինջաղյանի քաջալերանքով եւ նկարիչ դառնալու անբեկանելի ցանկությամբ հասնում է Պետերբուրգ. «Նկարչություն սովորելու որոշումս երկու պատճառ ուներ՝ առաջինը սիրում էի այդ արվեստը, երկրորդ՝ այդ ազատ գործ էր, այնպես որ այս ու այն խազեինի հրամանի տակ չէի լինում, *զի լեռներում ազատության քաղցր զգացումը արմատացած էր իմ մեջ*» (ընդգծումը.— *Ա. Կ.*):

Հետաքրքիր է հետեւյալ դրվագը. Պետերբուրգ գնալուց առաջ Թերլեմեզյանն էջմիածնում հանդիպում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ վանեցի Մկրտիչ Խրիմյանին, եւ հայտնում իր ցանկության եւ նպատակադրվածության մասին: Ի պատասխան՝ վանեցի հայրենակից Կաթողիկոսը բացականչում է. «Օ՜, ապուշ, նկարչությունը պատանեկությունից են սկսում, դու՝ երեսուննոց մարդ եւ հետո, հրացան եւ մատիտ իրար հետ ի՞նչ կապ ունեն: Ընկերներ ունես, գործ ունես»:

Պետերբուրգում դառնում է կայսերական նկարչական դպրոցի աշակերտ: Պետերբուրգյան ուսանողական եւ մտավորական միջավայրը նրան շատ բան է տալիս հոգեկան ու իմացական առումներով: Սակայն ուսումնառությունը Պետերբուրգում ընդհատվում է, խանգարող հանքամանք է դառնում իր հեղափոխական անցյալը:

Նկարիչն անցնում է մի քանի քաղաքների ցարական բանտերով, ազատվելուց հետո մեկնում է Փարիզ՝ կատարելագործվելու նկարչական արվեստի քուրայում: Ուսումնառում է Փարիզի Ժուլիան ակադեմիայի արվեստանոցում: Փարիզն ու արվեստի փարիզյան միջավարը նրան շատ բան են սովորեցնում, նորանոր գեղեցիկ մտահղացումներ ու ոգեշունչ լիցքեր հաղորդում: Փարիզում նա կարող էր փայլուն կարիերա սկսել եւ այդ ուղու վրա էր, սակայն իր թշվառ հայրենիքի ցավերն ու կանչերը հետ են բերում: Իսկ ուսուցիչները խնդրում էին մնալ: Մեկն այդ ուսուցիչներից՝ Ժան Դոլ Լորանսը, ավելի վճռական էր տրամադրված. «Դու այնտեղ միջոցներ չես ունենա ուսումնասիրություններ կատարելու, բայց այստեղ ապագա ունես, մնա՛ Ֆրանսիայում»:

Սակայն նախախնամության կամքով նա պիտի վերադառնար հայրենիք եւ հավասարաչափ գործունեություն ծավալելով թե՛ Արեւմտյան եւ թե՛ Արեւելյան Հայաստանում՝ ականատեսն ու մասնակիցը լիներ հայրենի ժողովրդին պատուհասած նորանոր փորձություններին:

20-րդ դարասկիզբը նորից սեւ էջեր գրեց մեր պատմական տարեգրության մեջ. 1904 թվականի Սասնո պոռթկումը եւ արեւմտահայության հերթական արյունահեղությունը, ցարիզմի հակահայ քաղաքականությունը եւ հայ-թաթարական կռիվները եւ վերջապես 1908 թ. հեղաշրջումը Թուրքիայում: Սույն վերջին իրադարձությունը հնարավորություն է տալիս Թերլեմեզյանին վերադառնալու Պոլիս: Թվում էր, թե կյանքը բարենորոգվելու, բարգավաճվելու եւ քաղցրանալու է: Պոլսում նկարիչը մեծ ընկերություն ու բարկամություն է սկսում Կոմիտասի հետ: Նրա հետ բնակվում է մի տան մեջ, որն ամբողջովին երկուսին էր պատկանում: Նկարիչն իր հուշերում պատկառանքով ու վեհությամբ է բնութագրում Կոմիտասին՝ գտնելով, որ այդ տարիներին Պոլսո մշակութային կյանքի ուշադրության առանցքում հայ մեծանուն երգահանն էր: «Այնտեղ, այսպես ասած՝ մեր անկուսակցական տունը մշակույթի օջախ դարձավ զանազան ուղղությանց կուլտուրական անհատների համար: Հույն գիտնականներ կային, որոնք գալիս էին Կոմիտասի հետ խորհրդակցելու եկեղեցական խաչերի ծագման մասին: Թյուրքեր կային, որոնք գալիս էին խորհրդակցելու Պոլսում երաժշտանոց եւ օպերա ստեղծելու մասին եւ այլն, եւ այլն»:

Գեղանկարչի եւ ազգային գործչի հուշերի մեջ առավել կարեւոր հետաքրքրություն են ներկայացնում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի հետ կապված դեպքերն ու իրադարձությունները: Նա բացասական գնահատական է տալիս կամավորական շարժմանը՝ գտնելով, որ այն զարհուրելի հետեւանքներ ունեցավ արեւմտահայության համար: 1915 թվականի ապրիլը Փանոս Թերլեմեզյանը դիմավորում է հայրենի Վանում: Ապրիլի 7-ին՝ առավոտյան, սովորականի նման բարձրանում է տանիք՝ նկարելու, ականատես է լինում հայ ինքնապաշտպանական խմբերի մարտական գործողություններին, որոնք թուրքերի տմարդի արարքներին էին պատասխանում: Այսպես սկսվում է Վանի հերոսական ինքնապաշտպանությունը: Գեղանկարիչն այն անվանում է «Վանի դյուցազնամարտ»: Թերլեմեզյանը դառնում է ոչ թե սովորական մի զինվոր, այլ ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը՝ «զինվորական ժամանակավոր կառավարության անդամ»: Հիացած վանեցիների մարտական անկոտրում կամքով, ոգու բացառիկ արիությամբ՝ նա այսպիսի բնութագիր է տալիս. «Վանի ժողովրդյան այն հրախառն, մահառիթ օղակը չկարողացավ ընկճել նրա պայքարի ոգին, նրա անսահման ազատասիրությունը եւ նրա խոր արհամարհանքը դեպի մահը: Այդ կորովի ու անձնվեր կեցվածքն իրավամբ նրան բարձրացրեց մինչեւ այն պատվանդանը, որ ցարդ միմիայն Սպարտայի լեոնիդասյան երեք հայրուր անմահ քաջերին էր հատկացված»: Վանի հերոսամարտն ավարտվեց հայոց հաղթանակով: Շուտով Վան հասան հայ կամավորական գնդերը: Փրկված էր Վանի հայությունը: Ափսոս, որ հաղթած վանեցին, այնուամենայնիվ, ստիպված էր տարագրվել իր բնօրանից: Հազարավոր վանեցիների հետ Արեւելյան Հայաստանում հանգրվանեց նաեւ անվանի գեղանկարիչը, որն ապրեց եւ ստեղծագործեց Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երեւանում մինչեւ կնքելն իր մահկանացուն (1941 թ.): Ահա կյանքի այսպիսի դրամատիկ ուղի էր ճակատագիրը նախատեսել վանեցի այգեգործին, հայ ազգային-ազատագրական մաքառումների ակտիվ դերակատարին, ազգային եւ համամարդկային ճանաչման հասած գեղանկարչին...

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Ն. ԲԵՐԴՅԱԵՎ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ թիվ 7

Պատերազմի հարցում մենք բոլորս ենք մեղավոր, բոլորս էլ պատասխանատու ենք եւ չենք կարող խույս տալ համերաշխիքից: Չարիքը, որ ապրում է յուրաքանչյուրիս մեջ, դրսեւորվում է պատերազմի միջոցով, եւ ոչ մեկիս համար պատերազմը որեւէ արտաքին բան չէ, որից կարելի է երես թեքել: Հարկավոր է մինչեւ վերջ կրել պատասխանատվությունը: Մենք մշտապես սխալվում ենք՝ մտածելով, որ մեզանից կարող ենք վերցնել պատասխանատվությունը եւ կամ ընդհանրապես մենք մեղավոր չենք: Չի կարելի զուտ մակերեսայնորեն հասկանալ պատերազմի մասնակից եւ պատասխանատու լինելը: Մենք բոլորս այսպես թե այնպես մասնակից ենք պատերազմին: Արդեն այն, որ ընդունում ենք պետությունը, ընդունում ենք ազգությունը, զգում ենք համազգային համերաշխիքը, կամենում ենք մեր ազգի հաղթանակը, ուրեմն՝ մասնակցում ենք պատերազմին եւ դրա համար պատասխանատվություն ենք կրում: Երբ մենք հաղթանակ ենք ցանկանում մեր բանակին եւ հոգեպես սպանում ենք հակառակորդին, մենք կրում ենք սպանության պատասխանատվությունը, ընդունում մեր մեղքը: Ստորություն կլինի սպանությունը, որ ինձ է պետք, բարդել ուրիշի վրա եւ ձեւանալ սեփական անձի առջեւ, թե այդ սպանությանը ես մասնակից չեմ: Նրանք, ովքեր միս են ուտում, մասնակից են կենդանիների սպանությանը եւ պարտավոր են պատասխանատվություն կրել այդ սպանության համար: Երեսպաշտություն է ձեւ անել, թե մենք երբեք բռնություն չենք գործել եւ սպանել, նույնիսկ ընդունակ չենք բռնության ու սպանության, ուստի ուրիշներն են պատասխանատվություն կրելու դրա համար: Մեզանից յուրաքանչյուրն օգտվում է ոստիկանությունից, զգում նրա կարիքը, եւ երեսպաշտություն է ձեւացնել, թե ոստիկանությունն ինձ համար չէ: Ռուսաստանի սահմաններից գերմանացիներին դուրս հանելու անկեղծ ցանկություն ունեցող մեկը հոգեպես ոչ պակաս է սպանում, քան զինվորները, որոնք զենքերով հարձակման են գնում: Ոչ ֆիզիկական սպանությունը բարոյական երեւույթ է, եւ այն առաջին հերթին կատարվում է հոգեւոր առումով: Կրակող եւ ծակող զինվորն ավելի քիչ է պատասխանատու սպանության համար, քան նա, ով թշնամուն հաղթելու գործում ունի կառավարող կամք, թեպետ անմիջականորեն ինքը չի հասցնում ֆիզիկական հարվածը:



Բարոյապես դատապարտելի է լինել միանգամայն մաքուր եւ ազատ բռնության եւ սպանության մեղքից եւ միեւնույն ժամանակ ցանկանալ քեզ համար, քո մերձավորների համար, քո հայրենիքի համար այն, ինչը ձեռք է բերվում բռնությամբ ու սպանությամբ: Սեփական մեղքն ընդունելու մեջ կա քավություն: Մեղքի ընդունումը բարոյապես բարձր է մաքրությունից: Դա բարոյական պարադոքս է, որը հարկ է լրջորեն կշռադատել: Սեփական մաքրության հանդեպ բացառիկ ձգտումը, իր ճերմակ հագուստների պահպանումը չեն բարձրագույն բարոյական վիճակներ: Բարձր բարոյականությունը մերձավորների հանդեպ պատասխանատվության հանձնառությունն է, ընդհանուրի մեղքն իր վրա վերցնելու պարտականությունը: ➥ էջ 8

Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» վեպը

➥ էջ 2, 4

Միջին ճանապարհ չկար, որովհետեւ ինքը միջին մարդ չէր. հերոսների ճակատագիրը սխրանքն է, քանի որ «....ֆէտայու օրէնքը հրացանէն դուրս թռած գնդակին պէս անողոք է» (էջ 329): Սիրո եւ զինվորության պատիվը կա այնքանով, որքանով սերը գողացված չէ, անօրեն չէ: Այստեղ սերն անօրեն է: Բայց ո՞րն է սիրո օրենը, երբ դրանից է սերը փախչում... Նաեւ դրա համար է, որ Սռմայի արարքը հոգեբանորեն պատճառաբանելու նպատակով վիպական գործողությունների ամբողջ ընթացքում հեղինակը նրա ամուսնուն պատկերում է անկողնային հիվանդ՝ մերձիմահ վիճակում:

Այլ է Կարոյի տարբերակը, որը գերության ճանապարհով հասնում է վրիժառու ամազոնուհու կերպարանք առած եւ քուրդ զորքի գլուխ անցած՝ իր համար ցանկալի Զարեհն, իսկ վերջում՝ որպես դավաճան, գնդակահարվում Արջ Սաքոյի ձեռամբ: Դավաճանը վերստին սերն էր:

Մարտիկի եւ Հաճի Մուսայի հակամարտությունն ավարտվում է կատաղի կռվով: Հաճի Մուսան ծանր վիրավորվում է, իսկ Մարտիկի սպանությունը վեպի երրորդ մասում («Կապույտ յուլունքով գլուխը») խարխլում է վիպական կառուցվածքը: Դրանից հետո վեպը շարունակվում է 250 էջից ավելի՝ արդեն կորցրած առանցքային ուղղվածությունը: Գործողությունների մեջ գլխավոր հերոսի դերն ստանձնում է Չերչի Կիրոսը, բայց վեպի գեղարվեստական ամբողջականությունը խաթարվում է:

Սելիմ բինբաշին իր աչքով է տեսնում սպանված Մարտիկին եւ կապույտ հուլունքով նրա գլուխը նվեր տանում Զարեհին: Հայերը մեծից փոքր ողբում են Սպիտակ Ձիավորի մահը, իսկ իրենց ազգային կերպարը վերականգնած մի քանի արհեստավորներ գողանում են թշնամու ավար դարձած նրա գլուխը ու գաղտնի թաղում:

Թշնամին մնում է թշնամի, բայց Հաճի Մուսան իր հերթին է գնահատում Մարտիկի սխրանքը. «Ինձի համար թշնամին ավելի մեծ արժէք եղած է, քան բարեկամը, որովհետեւ թշնամին աւելի շիտակ է ու անկեղծ, երբ կռիվ կ'ընէ, ճակատ ճակատի: Բարեկամը, չգիտես թէ ե՞րբ եւ որտեղէ՞ն պիտի իջեցնէ իր հարուածը» (էջ 527): «Պարտուած Հաճի Մուսան կարծես աւելի պարտուեցավ Մարտիկին սպանութիւնով» (էջ 528),– կերպարն ամբողջացնում է հեղինակը: Հաճի Մուսայի հանդեպ այս դրական անդրադարձը, մանավանդ որ թշնամանքը սոսկ կնոջ՝ Զեյնապի համար էր, աստիճանաբար նախապատրաստում է հայ-քրդական դիվանագիտական ու ռազմական դաշինքն ընդդեմ թուրքական բռնապետության: Իսկ Հաճի Մուսայի կերպարը լրացվում է նաեւ տոհմի անցյալ փառքով, նրա դաստիարակությամբ, որով զբաղվել է քուրդ բանաստեղծ ու բանահավաք Ահմեդ Հանին եւ դյուցազներգություններով ու հեքիաթներով բորբոքել նրա երեւակայությունը: Հիշողներ կան, որ այդ քուրդ տոհմը նախկինում խաչապաշտ է եղել, նրանց տանը մետաքսների մեջ փաթաթված սուրբ Ավետարանը տեսնողներ են եղել:



Հաճի Մուսան ճշտում է քրդերի պայքարի նպատակը. մինչեւ հիմա այն եղել է հայ գյուղերի թալանը, ինչը նաեւ թուրքերի սրտով էր, մինչդեռ այդ նպատակը պետք է ունենար քաղաքական կողմնորոշում:

Չերչի Կիրոսի (*կուսակցական գյուղական մի վարժապետ նրան դիմում է «պր. Կիրակոս», էջ 560*) կերպարը հասունանում է ամբողջ վեպի ընթացքում: Հեղինակը նրան ներկայացնում է բնիկ մշեցի, ճեմարանի թերավարտ ուսանող, ցածրահասակ, նիհար, որի գործողություններն անշեղ են ու հետեւողական: Մարտիկի հայտնությունը նաեւ Կիրոսի շնորհքն է: Նկատելի գործողություններով կամ աննկատ երեւույթով նա ամենուր է: Ասեղ, հուլունք վաճառող թուրք, քուրդ չարչիի երեւույթով նա ելումուտ ունի ամեն մի գյուղ ու քաղաք: Տեսնում, լսում է թշնամուն եւ ուղղորդում ու կազմակերպում յուրայինների գործողությունները: Իսկ յուրայինների կապակցությամբ «Կիրոս գիտէր, որ ամէն մէկ հայ չգրուած գիրք է, առանձին պատմութիւն է» (էջ 684):

1900–1904 թվականները Հրայր Դժոխքի անունով Ռ. Տեր-Մինասյանը համարում է «Հրայրեան շրջան», ավելացնում է՝ ուզում էր նմանվել Աղբյուր Սերոբին (*տես Ռ. Տեր-Մինասեան, նշվ. հրատարակությունը, հ. 3, էջ 198, 207*), նա նաեւ Սասունի սիրելին էր (*տես նույն տեղը, հ. 1, էջ 116*): Կ. Սասունին իր հերթին է բացառիկացնում նրան. «Հ.Յ. Դաշնակցութեան երեք անմահ հիմնադիրներու կողքին, իմ համոզումով, Հրայր կը ներկայանայ չորրորդ հիմնադիրը եւ այն առաւելութեամբ, որ Հրայր կը հանդիսանայ երկրի յեղափոխական շարժման հիմնադիրներէն մեկը: <....>: Ան երկրի յեղափոխական շարժման գլխաւոր սիւնն է» (*Կ. Սասունի, Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», 1931, թիվ 4*):

Մարտիկի մահից հետո վիպական դիպաշարի շարժիչ ուժն այսպիսով դառնում է Չերչի Կիրոսը: Նրա գործողությունների շրջագծում Համաստեղն ուժեղացնում է ՀՅԴ կուսակցական կոմիտեների, կուսակցական գործիչների անընդհատ ներկայությունը մեկ այս գյուղում, մեկ՝ այն: Անպակաս են կուսակցական հանձնարարականներն ու նամակները: Պարզ են դառնում ժողովրդական պայքարի կազմակերպիչների անուններն ու հասցեները, եւ հստակվում է գործունեության առաջիկա ծրագիրը՝ որպես հայ-քրդական ռազմաքաղաքական դաշինք: Վիպական գործողություններն այդուհետեւ զարգանում են այդ ուղղությամբ: Իսկ դա նշանակում էր, որ Կիրոսը պետք է լեզու գտներ ամեն տեսակի քուրդ ավազակապետերի հետ, որովհետեւ դրության տերերը նրանք էին: Իսկ նրանց ու նրանց աշիրաթների համար առկա թալանը գերադասելի էր հեռանկարային դաշինքից: Այս կարգի դժվարություններով հանդերձ՝ նպատակը դառնում է իրական. «Երբ Չերչի Կիրոս կը խոսեր Քիւրտիստանի մը մասին, Հաճի Մուսային այնպէս կը թուէր, որ Քիւրտիստանի մը տիրանալ ավելի հեշտ կռիւ է, քան ազատել ու տիրանալ Զեյնապին» (էջ 610): Զեյնապը Հաճի Մուսայի գայթակղության քարն էր եւ նրա վրա ազդելու միակ իրական միջոցը: Եվ ահա Հաճի Մուսայի շնորհիվ «....քրտական շարժումը առած էր դիմագիծ ու նկարագիր» (էջ 681):

Դարձի այս ճանապարհին էին նաեւ քուրդ այլ շեյխեր ու ցեղապետեր՝ Խալիլն ու Սատոն, որոնց կերպարները եւս բավականին հիմնավորված են ու լուսաբանված: Ելակետն այս է. գաղափարապես դաստիարակել բոլոր այն ցեղապետերին, որոնք «գործիք դարձած են թուրք կառավարութեան ու պատուհասը հայ ժողովուրդին ու գիւղերուն» (էջ 631):

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հերոսների դրամատիկ հոգեվիճակները «Գեւորգ Մարզպետունի» վեպում

➥ էջ 3

Իզուր էին թագուհին ու սպարապետը թախանձում թագավորին՝ մոռանալ անցյալը եւ վերստին տնօրինել արքայական գահը: Ոչ ոք չէր կարող զգալ այն տառապանքը, ինչ զգում էր ինքը՝ թագավորը: Նա կարող էր ներել բոլորին, իրեն կարող էին ներել, բայց նա ինքը չէր կարող ներել իրեն: Նա բարոյական պարտություն էր կրել, սրբապղծություն էր համարում նստել գահին, որովհետեւ արատավորել էր առաջնորդի կոչումը: «Հանցանքներս շատ են, նրանց թվել չեմ կարող... Այդ չարիքների հեղինակն էլ ես եմ: Տավուշից գրած քո նամակը ճշմարտության մի քարոզ էր... Շնորհակալ եմ. Նա ազատության դուռ բացավ ինձ համար... Եթե իմանաս, թե որչա՜փ ուրախ եմ կեղեքող տանջանքներից ազատվելու համար» (էջ 389):

Հասկանալի է, որ մահից առաջ արքան թագավորի պարտադրած գաղափարը պիտի հնչեցներ, ինչը տեղի է ունենում կերպարի հոգեբանական անհամոզչականության հաշվին: Եթե նրա հասկանալի դրամատիզմի շարունակությունն է «Ձեզ է մնում կյանքը յուր չարիքներով եւ հրապույրներով» խոսքը, ապա հեղինակային պարտադրանք է շարունակությունը. «Աշխատեցեք վայելել նրան իմաստնաբար եւ չնմանիլ ինձ» (էջ 433): Սակայն Վ. Սաֆարյանի կարծիքով՝ սա էլ բացատրելի է Աշոտի՝ որպես իր սեփական մեղքերի խոր ինքնագիտակցության եկած անհատի համար (*տես Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 162)*: Այդ հիմքի վրա է ընկալվում նաեւ նրա վախճանը. «Նա մեռավ յուր հին վերքի ցավից: Բայց արքունիքում պնդում էին, թե նրա վախճանն արագացրեց Ասպրամ իշխանուհու ինքնասպանությունը» (էջ 433):

Գեւորգ Մարզպետունին, սգալով արքայի մահը, մտորում է. «Բայց ավա՜ղ, խառնվածքի մի թուլություն նրա դյուցազնական մեծությունը թունավորեց... սիրո փանաքի որդը հսկայական հրաշակերտը տապալեց...» (էջ 393):

Մուրացանը չի կարողանում ներել մեծ մարդու կամքի թուլությունը: Նա հետեւողականորեն հաստատում է այն գաղափարը, որ պետական գործիչը պետք է անսահման բարձր լինի հասարակ մահկանացուներից, հաղթահարի իր անձնական ապրումներն ու թուլությունները, կարողանա սթափ գնահատել իրավիճակը, ճիշտ որոշումներ կայացնել, անձնական շահերը ստորադասել հասարակականին:

Իրենց կրքերի տարերքին մատնված մարդկանց կյանքի պատմությունը մի խորհուրդ է թաքցնում իր մեջ, բարոյական մի դաս, պատմափիլիսոփայական մի պատգամ, որ գրողը պարզում է որպես հավիտենական ճշմարտություն: Մարդուն բնորոշ է զգացմունքին տրվելու թուլությունը, բայց այն պետք է զիջի իր դիրքերը, երբ հանդիպում է գերագույն ճշմարտությանը՝ հայրենիքին: Բոլոր զգացմունքները մարդկային են, բայց զգացմունքներից գերագույնը հայրենասիրությունն է, բոլոր զգացմունքները մասնավոր են, հայրենասիրությունը՝ բացարձակ. նրա դեմ մեղանչողի պատիժը լինում է Աշոտ Երկաթի պատժի նման հոգետանջ:



Մեր կարծիքով՝ Մուրացանին չի հաջողվել ներկայացնել Աշոտ Երկաթի կերպարն ամբողջությամբ, ստեղծել հոգեբանորեն համոզիչ կերպար: Հեղինակին հաջողվել է պատերազմի դաշտում արդարացնել նրա Երկաթ մականունը, բայց պատերազմի դաշտից դուրս նա թուլակամ մահկանացու է, ում առաջնորդում են սեփական կրքերը: Հզոր արքան, որի օրոք Հայաստանում խաղաղություն է հաստատվում, որը կարողանում է համախմբել նախարարներին ու հասարակ ժողովրդին, պարզապես դառնում է իր զգացմունքի գերին, ստոր քայլերի է դիմում, գործում է այնպիսի արարքներ, որոնք վայել չեն Հայոց թագավորին:

Որքան էլ որ Մուրացանն Աշոտ Երկաթի կերպարը կերտելիս բացթողումներ է արել, շեղվել պատմական աղբյուրներից, նրան ներկայացրել իբրեւ թուլամորթ արքա, որը դառնում է իր զգացմունքների զոհը, սակայն ճշմարտության դեմ մեղանչած կլինենք, եթե չասենք, որ գրողին, այնուամենայնիվ, հաջողվել է ստեղծել հոգեկան հարստություն ունեցող ինքնատիպ կերպար, որը, ըստ էության, հարազատ է դարաշրջանի ոգուն: Մուրացանը կարողացել է ըմբռնել մեծ անհատականությունների այդ դարաշրջանի պատմական ու հոգեբանական ճշմարիտ ոգին, քանի որ դա իսկապես ընդգծված անհատականացման ու անհատականությունների շրջան էր, որտեղ բարձր թռիչքները չէին կարող չզուգորդվել անկումներին, խիստ անձնականացված հերոսականությունը չէր կարող չշաղախվել դրամատիզմին (*Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 132):*

Մեր կարծիքով՝ Աշոտ Երկաթի կերպարի վերաբերյալ սուբյեկտիվ է Ա. Տերտերյանի տեսակետը. նա պնդում է, որ արքայի կերպարը «միանգամայն դժգույն եւ ստվերային է» (*տես Տերտերյան Ա., նշվ. աշխ., էջ 10)*: Մեր կարծիքով՝ Աշոտ Երկաթի կերպարն ավելի հետաքրքիր ու դինամիկ կերպար է, քան Գեւորգ Մարզպետունու կերպարը, քանի որ գրողը նրան ներկայացնում է բազմակողմանիորեն՝ թե՛ դրական, թե՛ բացասական հատկանիշներով:

Սամվել ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Չարենցյան հետքերով

➥ էջ 5

Հանգամանքների բերումով իմ երկրորդ առնչությունը չարենցյան վայրերում տեղի ունեցավ 2013 թ., երբ Երեւանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի շրջանավարտ մի շարք մագիստրոսների եւ բակալավրերի հետ մեկնեցինք Արեւմտյան Հայաստան՝ Աղթամար վանքում եւ Անիի Մայր տաճարում հանձնելու նրանց ավարտական դիպլոմները: Ճանապարհորդության ընթացքում եղանք նաեւ Ղարսում, այցելեցինք բերդ եւ, իհարկե, Չարենցի բնակած ենթադրյալ տուն, որը շատ չէր տարբերվում «Տաղ անձնական» քերթվածում գրողի նկարագրած ինչպես գտնվելու վայրից, այնպես էլ արտաքին տեսքից. «Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինված անտաշ քարով» (*տե՛ս Ե. Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Երեւան, 1984, էջ 301*):

Չարենցագետ Դավիթ Գասպարյանը, ելնելով Չարենցի մի արտահայտությունից, թե «իջնում էինք գետափ», այն կարծիքն է հայտնում, որ այդ տունը գտնվել է Ղարսի բերդի սարալանջին, որն այնքան էլ համոզիչ չէ:

Երբ հարթ տեղանքից մոտենում ես անմիջապես ջրին, հաճախ են օգտագործվում «իջնենք ջրի մոտ», «իջնենք ջուրը», «իջնենք ջրի ափ», «իջնենք գետափ» արտահայտությունները, որոնք բոլորովին էլ չեն նշանակում, թե ինչ-որ մի բարձունքից (տվյալ դեպքում՝ բերդի սարալանջից) է էջքը: Կարծում ենք՝ չարենցյան «իջնել»-ն ավելի շատ *մոտենալ* է նշանակում, քան վերեւից իջնել:

Ասում են, որ «չարենցյան» գետափնյա տունն այսօր արդեն չկա: Բայց մեր գնացած ժամանակ այն դեռ կանգուն էր՝ թեեւ կիսափուլ վիճակում, որն ինքնին ամեն ինչ կորսվածի, տանուլ տվածի խորհուրդն ուներ եւ որն ամբողջովին «անգույն Կարսի» «հնամյա թախիծով» էր պատված: Այն անանց թախիծով, որի վերաբերյալ գրողն իր «Չարենց-նամե»-ում գրել է.

Նա մեր տանն էր վաղուց մեծացել,
Դեռ եղել էր պապիս ժամանակ:
Մնացել էր՝ հոգնած ու ծեր,
Սպասում էր, որ երկինք գնա...
(*Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երեւան, 1955, էջ 45*):

Տան դիմաց՝ Ղարսի այգու ձախ կողմի վրա բարձրացող միջնաբերդի գագաթին ծածանվող կարմրալուսնային թուրքական դրոշն ու «չարենցյան տան» ուղղությամբ՝ գետի այն կողմից քիչ հեռու, կանգուն, դեռեւս շեն, սեւ քարով կառուցված ու սեւավորված կիսաբաց-կիսափակ Առաքելոց եկեղեցու առկայությունն այլ բան չէին հաստատում, եթե ոչ «գորշ քաղաքի» այն անկումը, որ նա ունեցավ 1920-ին, եւ որի մասին այնքան խոր ու ողբերգական գրել է Չարենցն իր «Երկիր Նաիրի» «պոեմանման վեպում»՝ ասելով, որ այն «ուտում» է իր սիրտը, օրերի մշուշից հարցնում. «....չե՞ս ճանաչում: Մոռացե՞լ ես...», թաղվում մշուշում՝ «հազա՛ր-հազա՛ր տեսքով ու կերպարանքով» նորից ու նորից պատկերանալու համար՝ մերթ որպես ցնորք ու կանչ, հուշ ու ֆիկցիա, մերթ էլ որպես «ուղեղային մորմոք»: Այդ Նաիրիի բնակիչներից էին նաեւ Չարենցի ծնողները, հայրը՝ «հագին կապա», դեմքը՝ «արծաթե ափսե», մայրը՝ «գլխին՝ թեհրանի լաչակ», մազերին՝ «ոսկեմուգ հինա»: Ասել է՝ մանկություն, «ոսկեթեւ մի թռչուն», որը նման եղավ՝

....լճակն ընկած
Արծաթե լուսինի դիսկին:—
Դու կայիր— ու չկաս հիմա դու,
Արեւի դեմ դու, թույլ, հանգար—
Բայց արդյոք կայի՞ր դու իսկի...
(*նույն տեղում, էջ 46*):

Չարենցյան երրորդ առնչությունը շատ ավելի երկար է առկա իմ կյանքում, գրեթե ամենօրյա: Բնակվելով Քանաքեռում՝ մեր տանից երեւացող նրա երկու եկեղեցիներից ոչ հեռու, ես հաճախ եմ այցելում կամ անցնում նրանցից մեկի՝ 1695-ին կառուցված Սբ Հակոբ Մծբնա Հայրապետի եկեղեցու հարակից ճանապարհով, մյուս եկեղեցու՝ Սբ Աստվածածնի շինարարությունը նույնպես այդ թվականին է ավարտվել, եւ որի կենտրոնական մուտքի մոտ Ապովենց (Աբովյանների) գերեզմանատեղին է: Եկեղեցին նշանավոր է նաեւ նրանով, որ ժամանակին Էջմիածին—Թիֆլիս—Էջմիածին երթեւեկող ուղեւորների հայտնի ու ամենամեծ իջեւանատեղին է եղել: Պատմական իրադարձությունների առումով շատ ավելի ուշագրավ է Սբ Հակոբ եկեղեցին, որն անցյալում ունեցել է նաեւ եկեղեցական սեմինարիա: Եկեղեցին եղել է պարսպապատ, որից հիմա մնացել է միայն կամարակապ մուտքը, որն ունի ձիավոր մարդու բարձրություն եւ երկու մարդու համար քարե նստելատեղ՝ նախատեսված հսկիչ-պահակների համար:

Վաղուց նաեւ չկա եկեղեցու հարավային դռան մոտ գտնվող հսկա չինարի ծառը, որը տարիների ու բարդ դեպքերի ծանր բեռ ուներ, «ականատեսն» էր եղել որմնանկարների ջնջմանը ու եկեղեցին կոլտնտեսության պահեստի վերածելուն եւ գուցե հենց դրանից էլ թեքվել էր, կիսախոնարհվել, նմանվել ծնկաչոք աղոթող մարդու եւ որը թեեւ չէր չորացել, բայց կտրվեց տարիներ առաջ: Այն չինարին, որի հովանու ներքո քանաքեռցիները սեղան էին բացել 1836-ին իրենց հայտնի համագյուղացի Խաչատուր Աբովյանի՝ Դորպատի համալսարանն ավարտելուց հետո հայրենիք վերադառնալու առիթով:

Ի դեպ՝ մեր գերդաստանը Խ. Աբովյանի, Համո Սահյանի խոսքերով ասած, հայ գրականության «մեծերից ամենամեծի», Ե. Չարենցի բնութագրմամբ, մեր ժողովրդի «գոյության խորհուրդ» դարձած մեծ Լուսավորչի հետ մայրական կողմից ազգածնողական կապ ունի՝ լինելով Աբովյանի քեռու (մորեղբոր)՝ Կրչենց Վիրապի շառավիղներից, որի մասին բավականին գրում է Աբովյանն իր «Վերք Հայաստանի» վեպում: Չարենցի հետ, ինչպես արդեն գրել ենք վերեւում, միայն պատահականություններն են առնչություններ ստեղծել. ես էլ եմ ծնվել մարտի 13-ին, եւ իմ հոր անունն էլ է Աբգար, որը 1915-ին՝ 19 տարեկանում, եղել է Քանաքեռի՝ նույն Սբ Հակոբ եկեղեցու տարածքում կազմավորվող կամավորական գումարտակների (դրուժինաների) զինվոր եւ կռվելով հասել մինչեւ Սարիղամիշ:

Շարունակելի

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

➥ էջ 6

Ես մտածում եմ, որ բարձր մշակույթի հիմքում ընկած է նույն այն մեղքը, ինչը պատերազմի հիմքում է, քանի որ այդ ամենը ծնվում եւ զարգանում են բռնության մեջ: Սակայն չարիքը, որը ստեղծվում է մշակույթում, ինչպես եւ չարիքը ստեղծված պատերազմում, երկրորդական են եւ ոչ թե առաջնային. այն պատասխանն է այն չարիքի, որը սկզբնական է՝ ծնված խավարից եւ պարտադրված կյանքի սկզբնահիմքին:

Հնարավոր չէ մոտենալ պատերազմին դոկտրինյորականորեն (կուրադավան) — նպատակահարմարորեն: Կյանքի գնահատմամբ դոկտրինյորական բացարձակությունը մշտապես անկյանք է, բռնի, մշտապես փարիսեցիական շաբաթների հռչակումն է մարդու վրա: Սակայն մարդը բարձր է շաբաթից, եւ շաբաթը չպետք է կյանքի բացարձակ սկզբունք լինի: Հնարավոր է եւ ցանկալի միայն կենսականպլաստիկ բարոյականությունը, որի համար աշխարհի ամեն բանում կա անհատական ստեղծագործական խնդիր: Հարաբերականության ոլորտին ընդունելի չէ բացարձակը: Պատմականորեն մարմնական աշխարհում ոչինչ չկա բացարձակ: Հնարավոր է բացարձակ կյանք, սակայն հնարավոր չէ կիրառել բացարձակը հարաբերական կյանքի հանդեպ: Բացարձակ կյանքը կյանքն է սիրո մեջ: Բացարձակ կյանքում չի կարող լինել պատերազմ, բռնություն եւ սպանություն: Սպանությունը, բռնությունն ու պատերազմը հարաբերական կյանքի նշաններն են, պատմական-մարմնական, ոչ աստվածային: Պատմական մարմնում, նյութական սահմանափակումներում հնարավոր չէ աստվածային բացարձակ կյանք: Մենք ապրում ենք բռնության մեջ, քանի որ ապրում ենք ֆիզիկական մարմնով: Նյութական աշխարհի օրենքները բռնության օրենքներ են: Բռնության եւ պատերազմի բացարձակ մերժումը միայն անհատական երեւույթ է, այլ ոչ թե սահմանված կարգ ու օրենք: Իսկ դա ենթադրում է «խաղաղության» եւ դրա երկունքի օրենքի ոգեշնչում, զարթոնք, մարդու մարմնի լուսավորում ոչ երկրային լույսով: Սակայն աշխարհի նյութական կյանքի հանդեպ չի կարելի կիրառել բացարձակը որպես օրենք ու կարգ: Ավետարանը կյանքի օրենքը չէ: Բացարձակը կիրառելի չէ, այլ ձգտելի: Բացարձակ կյանքը դա երանելի կյանքն է եւ ոչ թե կյանքը, որը լի է կարգերով ու օրենքներով: Հարաբերականի հանդեպ բացարձակի կիրառումը օրենքներով շաբաթականություն է, ինչը դատապարտեց Քրիստոսը:

Բացարձակ ճշմարտությունը չարիքին բռնությամբ չընդիմանալու մասին կյանքի օրենքը չէ այս քաոսային եւ մութ աշխարհում, ինչը խրված է նյութական հարաբերականության մեջ եւ արտաքնապես ներմուծված բաժանումով ու թշնամությամբ:

Թող այդ կյանքն անցնի բացարձակ կյանքի սիրո մեջ: Միայն կարելի է սա ցանկանալ եւ միայն սրան կարելի է ձգտել: Սա կատարվում է խորհրդավոր ու անտեսանելի կերպով, ինչպես անտեսանելի է ընթանում Աստծու Արքայությունը:

Բայց կարիք չկա ոչ մի ներքին իմաստ ցանկանալ արտաքին աշխարհին՝ նախկին քաոսում, մթան, չարության եւ թշնամության մեջ: Դա ոչինչ չի տալիս: Բացարձակի օրենքները հարաբերական կյանքին պարտադրելը դոկտրինյորություն է՝ զերծ ուզածդ ներքին իմաստից: Ցանկալ կարելի



է լոկ ներքին առողջություն եւ ոչ թե արտաքին, մակերեսային առողջություն՝ ներքին հիվանդության պարագայում: Չի կարելի խիստ ընդգծել, որ Քրիստոսի բացարձակ սերը հոգու նոր, երանելի կյանքն է, այլ ոչ թե հարաբերական նյութական կյանքի օրենքը: Ահա թե ինչու է անվերջորեն բարդ քրիստոնեության՝ պատերազմի նկատմամբ վերաբերմունքի խնդիրը:

Պատերազմը լոկ կարելի է ընդունել որպես ողբերգական-տառապալից երեւույթ: Պատերազմի նկատմամբ վերաբերմունքը կարող է լինել միայն անտինոմիական: Դա ոչնչացումն է համաշխարհային կյանքի ներքին խավարի, ներքին չարիքի, մեղքի ընդունումն ու ապաշխարումը: Բարեհոգի, լավատեսական, բացարձակ ուրախ վերաբերմունք պատերազմի հանդեպ թույլատրելի չէ. դա անբարոյականություն է: Մենք պատերազմը եւ ընդունում ենք եւ մերժում: Մենք ընդունում ենք պատերազմը հանուն նրա մերժման: Ռազմամոլությունն ու պացիֆիզմը նույնանման կեղծիք են: Եվ մեկում, եւ մյուսում արտաքին վերաբերմունք կա կյանքի նկատմամբ: Պատերազմի ընդունումը կյանքի ողբերգական սարսափի ընդունումն է: Եթե պատերազմում կա գազանություն եւ մարդկային դիմագծի կորուստ, ապա նրանում կա նաեւ մեծ սեր՝ խավարում փշրված:

Թարգմանությունը՝ Ա. Ս.-ի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.05.2022 թ.
Տպաքանակը՝ 1225